



### ՎԱՐՉԱՊԵՏԸ ՅԵՏԱԶԳԵՅ ԱՔՔԱՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՄՈՒՍԹԱՖԱ ՍԱՍԻՆ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի լրատուական գրասենյակը յայտարարեց, որ Հարիրի ցուցակում չկան Վարչապետի լրատուական գրասենյակում աշխատողները, որոնք հարկադրված են լինում Վարչապետի հետ կապի ամրապնդումը:

«Անոր վաղաժամ մահով Սայտա կը կորսնցնէ ազգային և քաղաքական ակնաւոր դէմք մը, եւ այդ սիրելի քաղաքի հաւատարիմ որդի մը», հաստատեց ան:

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի լրատուական գրասենյակը նաեւ յայտարարեց, որ յետաձգուած են շարքավերջին նախատեսուած վարչապետին հիւսիս եւ յատկապէս Աքքար այցելութիւնները, երեսփոխան Մուսթաֆա Սաստի մահուան եւ սուգին պատճառով:

Հաղորդագրութիւնը ըսաւ, որ վարչապետ Հարիրի շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր աքքարցիներուն, մանաւանդ շրջանի նախարարներուն, երեսփոխաններուն, քաղաքապետներուն, թաղապետներուն եւ շրջանի երեսփոխաններուն, որոնք փինք հիւրընկալելու պատրաստութիւններ կը տեսնէին:

Ան կը խոստանայ աքքարցիներուն հետ մօտ օրէն հանդիպում ունենալ, նաեւ կը խոստանայ որ իր առաջնահերթ նպատակներէն մէկը կը մնայ Աքքարի բարգաւաճումն ու հայրենիքին հետ անոր կապի ամրապնդումը:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի մօտէն կը հետաքրքրուի այս հարցով. ան նախագահեց պետական մարմիններու մեծ ժողովի մը, որ ուսումնասիրեց Թրիփոլիի կարիքներու ամբողջական թղթածրար մը, ըսաւ Միքայիլ, դիտել տալով, որ այս աշխատանքը արդիւնքն է Թրիփոլիի նախարարներու հետեւողական ճիգերուն. անոնք Թրիփոլիի բոլոր կարիքները խոշորացոյցով կը ներկայացնեն իշխանութեան:

### ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՆԱԿԸ ԱՆՁՆԱԿՆԵՐԻ ԻՐԵՆՔ ԸԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՆՈՅԹ ԿՈՒ ՏԱՆ ԸԱՐՑԵՐՈՒՆ

Կ'ԸՍԵ ՇԵՅԻ ՔԱՊԱԼԱՆ

Շիիններու Գերագոյն Խորհուրդի փոխ նախագահ Շէյխ Ապտէլ Ամիր Քապալան երեկուան իր քարոյին մէջ Վարչապետը «համայնքային քաղաքականութիւն որդեգրելէ»:

«Մեր երկրին մէջ քաղաքագէտները իրենք են, որ համայնքային բնոյթ կու տան ամէն հարցի. անոնք համայնքամոլներ են քաղաքականութեան մէջ, տնտեսական հարցերու մէջ, կարողն ու ատակը ընտրելու ատեն եւ ամէն պահու. այն է մեր ախար», ըսաւ ան:

Շէյխ Քապալան դիտել տուաւ, որ կը լսենք ու կը կարդանք քաղաքական քաջքշուքներ, տարբեր դիրքերէ քաղաքական փոխադարձ «ոմբակոծումներ». գնդակը

հեղ մը այս, հեղ մը այդ կողմին կը նետուի. այս երեւոյթը, որ իսկապէս ցուալի է, շփոթի կը մատնէ մեզ եւ կը մղէ հարց տալու, թէ ո՞վ կ'օգտուի այս պատահածներէն:

Շէյխ Քապալան կոչ ուղղեց պետական պատասխանատուներուն՝ ըլլալու միակամ. «Վերադարձէք ձեր ժողովուրդին, որպէսզի բոլորս միասին եւ միեւնոյն խրամին մէջ ըլլանք ու պայքարինք ընկերային եւ ապրուստի հարցերու լուծման համար, միասնաբար ամրապնդենք քաղաքական եւ ապահովական կայունութիւնը, որովհետեւ մեր վրայ ի գործ դրուող ճնշումները չեն թոյլատրեր նման ընթացք», ըսաւ ան:

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ...

Շարունակուած Ա. էջէն

Համաս յայտարարած է, թէ Շեհատէի սպանութեան վրէժը պիտի լուծէ աւելի եւս մահացու յարձակումներով քան անձնասպանական գործողութիւններով:

Երէկ հազարաւոր պաղեստինցիներ կազմաւորուած զազալի ժապալիա զաղթական մասնախումբով մասնակցեցան Շեհատէի յաջորդող նոր հրամանատարի մը գորակցութիւն արտայայտելով: Ցասակ չէ թէ ո՞վ է ան:

Միւս կողմէ, Այսրլորդանանի Քալիլիա քաղաքին մէջ, իսրայէլացի զինուորներ տուներ խուզարկեցին:

զարկած են եւ պողեստինցի մը սպաննած, մինչ ան, ըստ ընտանիքի անդամներուն, իր խոհանոցին մէջ նստած էր: Բանակը յայտնած է, թէ քննութիւն բացած է անոր մահուան շուրջ:

Կազալի մէջ իսրայէլեան բանակին կողմէ չէն քերու քանդումէն քանի մը ժամ ետք, պաղեստինցիներ հակահրատարակելու հրթիռ մը արձակած են օրոպիւսի մը վրայ՝ Նեցարիմ հրէական բնակեցման վայրին մօտ: օրոպիւսը վնասուած է, սակայն մէջը, իսրայէլացիներ չեն արձանագրուած:

**ԱՐԱՔ ՊԱՏՈՒՐԱԿՆԵՐ ԸԱՐՈՒԱԾԻՆ ԳԾՈՎ ԲԱՆԱԶԵԸ ԿԸ ՅԵՏԱԶԳԵՆ**

ՄԱԿԻ մէջ, արաք պատուիրակներ յետաձգած են Ապահովութեան Խորհուրդին բանաձեւի մը ներկայացումը՝ էֆ-16 տիպի օդանւում տեղի ունեցած հարուածին գծով: Դիւանագէտներ յայտնած են, թէ յօդուածին գծով տարակարծութիւններ եղած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄՕՏԷՆ ԿԸ ՀԵՏԵԻ ԶԻՍԻՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՄԻՔԱԹԻ

Հանրօգուտ աշխատանքներու եւ փոխադրամիջոցներու նախարար Նաժիպ Միքայիլ երէկ հաստատեց, որ Թրիփոլիի կարիքներն ու պահանջները քննարկելու կառավարութեան քալիին նպատակն է լուրջ ուսումնասիրութիւն կատարել, առ ի պատրաստութիւն այդ հարցերու լուծման աշխատանքին:

**ԼՕՍԻ ԶԵՂԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՌԵԶԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը որոշած է 18 Սեպտեմբեր 2002ին նշել որբերու խնամակալութեան ծրագրին տասնամեակը Հայաստանի մէջ:  
Ետաքրքրուողները կրնան դիմել ԼՕՍԻ Զրջանային Վարչութեան գրասենեակ մինչեւ 20 Օգոստոս, 2002:  
Հեռաձայնի թիւ: 01-265359, 253793-4-5

**ԱԶԳ. «ՅԱՌԱՍՉ - Գ. ԿԻՒՂ ՊԵՆԿԵՆՆ» ԵՐԿՐԴ. ՎԱՐՃԱՐԱՆ**  
**ՏՆՕՐԵՆԻ ԿԱՐԻՔ**  
Ազգ. «Յառայ - Գ. Կիւղպենեան» երկրորդ վարժարանը կարիքը ունի վկայեալ տնօրէնի մը: Փափաքողները իրենց դիմումները կրնան ներկայացնել վարժարանի խնամակալութեան:  
Հեռ. 08-620616  
Fax: 08-620614  
**ԽՆԱՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ**

**ՄԱՀԱԶԴ**  
Տիկին Թերէզ Գափլանեան  
Տէր եւ տիկին Ժորժ եւ Մարի Գափլանեան  
եւ դուստրը  
Տէր եւ տիկին Անդրանիկ եւ Էօժէնի Գալճեան  
Տէր եւ տիկին Սարգիս եւ Արտեմիս Իսկենտէրեան եւ դստերը  
Տէր եւ տիկին Րաֆիք եւ Էլզա Փերտէճեան եւ դստերը  
Տիկին Սիրարփի Գափլանեան  
Տէր եւ տիկին Սարգիս եւ Էլիզապէթ Գափլանեան  
եւ զաւակը  
Տէր եւ տիկին Վահէ եւ Սոնա Գափլանեան  
եւ զաւակունք  
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոյ, հօրեղբոր, քեռիին եւ հարազատին՝

**ՅԱԿՈՒ ԳԱՓԼԱՆԵԱՆԻ (Ծնեալ՝ Գոնիս)**  
մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 23 Յուլիս 2002ին, Կիլիսիայի մէջ, Միացեալ Նահանգներ, յետ երկարատեւ հիւանդութեան:  
Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Կիրակի, 28 Յուլիս 2002ին, Կիլիսիայի մէջ:  
● Երկայն ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Հանգուցեալին մահուան եօթնօրեակին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Յուլիս 2002ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
**ՃԱՇԿԵՐՈՅԹ**  
● Գեղարուեստական ճոխ յայտագիր  
**Տեղի կ'ունենայ Կիրակի, 11 Օգոստոս 2002ի կէսօրուան ժամը 12:00էն սկսեալ, JEDODNA ձաշարանին մէջ, Պէյթ Մերիի մայրուղիին վրայ:**  
**Տոմսերը կարելի է ստանալ «Լ. Շանթ» կեդրոնէն, Պուրճ Համուտ, հեռ. 01-265899 եւ 249375:**

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ.Յ.Գ. Լ.Ե.Մ.Ի «Մ.ՍԱՔԵՆ» ՄԱՍՆԱԾԻՒԿ  
**ՀՍԿՈՒՄ Ի ՅԻՇԱՏԱԿ ԼԻԶՊՈՆԻ 5 ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ**  
ԿԸ ԲԱՆԱՍՕՒԷ ԸՆԿԵՐՈՒՄ ԿԵՐԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ  
\* ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ  
Տեղի կ'ունենայ Կիրակի 28 Յուլիս 2002ի երեկոյեան ժամը 8:00ին «ՍԱՐԳԻՍ ԶԵՅԹԵԼԵԱՆ» ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏԱՆ ԸՐՁԱՓՈՒԿԻՆ ՄԷՋ  
ՀՐԱԵՐ

Կազմակերպութեամբ Հ.Յ.Գ. Լ.Ե.Մ.Ի «Րաֆիք» Մասնամիջոցի  
**Հայկական երգերու Փառատօն**  
ԵՆՔԸ ՊԱՇՏՄԱՐԵԱՆ - ՍՈՒԿ ՓՄԱՊՈՒՔԵԱՆ - ՎԻԳԵՆ ՏՐԵՃԵՔԵՆԵԱՆ - ՀՐԱՉ ԿՍՏՈՒԿԵԱՆ - ՄԱՆՈՒԿ ՄԻՍՏԵԱՆ - ԿԱՐՈ ԿԱՊՈՒՏԿԵԱՆ - ՍՐԱՍՅԱ ՀԱՐՈՒՆԵԱՆ - ԳՕԳՕ ԿԵՕԸԼԵՔԵԱՆ:  
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ՍԵԳՕ ՊԱՇՏՄԱՐԵԱՆԻ  
Տեղի կ'ունենայ Որբաժ 9 Օգոստոս 2002ին, երեկոյեան ժամը 8:00ին, ՅՈՒՆԵՍԿՕ ՊԱՇՏՄԱՐԸՆԻ ՄԷՋ.  
ԳՈՐԶ ՀԱՄՈՒՏ:  
Սակ՝ 5000 լ.ա.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ.Յ.Գ. Լ.Ե.Մ.Ի «ՀՐԱՅՐ ԳԺՈՒՔ» ՄԱՍՆԱԾԻՒԿ  
ՀՈՎԱՆԱԿՆԵՐՈՒԹԵԱՄԲ ՊՈՐՏ ՀԱՄՈՒՏԻ ԶԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
**ՍԱՄՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ «ՀԱՅՐԵՆԻ ԶԱՄԱՆ» ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԶՈՒՅԿԱՆՈՒՄԸ ԲԱՅՍԱՆ ՀԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ**  
Ստիկիանոս Գոգարացիին  
Տեղի կ'ունենայ Երկուշաբթի 29 Յուլիս 2002ին, երկուշաբթի ժամը 8:00ին Համազգային Նշան Թաղամասի Բնակարանի «Վապուրակ» սրահին ներս, Չոպարի Ե. Պլաք. Այլուրդ:  
Ցուցանալու կը տեւ 29 Յուլիս 1 Օգոստոս 2002, ամեն օր 8 քայքայեալ ժամը 6:00-ը 10:00:  
ՀՐԱԵՐ

### ԲԶԻԶԱՅԻՆԻ ԶԱՐԳՈՎ ՆԱԽԱՐԱՐ ԲԸՐՏԱՅԻ ԳՐԱՍԵՆԵՍԱԿԸ ԶՐԱՊԱՐԱԿԵՅ ԶԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Բըրպահիի պետական պոռթեան գրասենեակը երէկ հրատարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեց, որ քիչքային հեռանային հասարակութիւններու առաջնահերթութեան շարքին մտնող հաղորդակցութեան թրթրաբար գոյ պնդեալական եւ թերթիք հարց է երբեք քաղաքական, որ կրնայ վնասել քաղաքացիներու եւ յետպետեան շահերուն:

Հաղորդագրութիւնը ընդգծեց նաեւ, որ յետպետեան ճշդած նեղ ժամանակամիջոցներուն մէջ իսկ նախարարութիւնը կրցաւ միջազգային փորձագէտներու հետ հարցազրուիչութիւններ կատարելու մասին որոշումներ ընդունել:

ՄԱԿԻ մէջ, արաք պատուիրակներ յետաձգած են Ապահովութեան Խորհուրդին բանաձեւի մը ներկայացումը՝ էֆ-16 տիպի օդանւում տեղի ունեցած հարուածին գծով: Դիւանագէտներ յայտնած են, թէ յօդուածին գծով տարակարծութիւններ եղած են:

**ԿՈՒՉՈՒԻ**  
● Ելեկտրազէտ BT կամ TS  
Տարիք՝ 22 - 26:  
Անգլերէն գիտնալը պայման:  
Համակարգիչի windows ծրագրի ծանօթ: Կը խնդրուի CV-ին ուղարկել:  
FAX: 04 - 401520  
Թիւն կամ P.O.Box 96  
Man-souriet - el - Metn,

**ԿՈՒՉՈՒԻ**  
● Հաշուապահ օրիորդ մը, անգլերէն եւ համակարգիչ գիտնալը պայման:  
Հեռ. 01-242549:

**ԿՈՒՉՈՒԻ**  
● Ոսկերիչ (սետեքը) գործուոր մը: Հեռ. 03-666509:  
**Khazzar-Orient Plus**  
Travel & Tourism  
**Varna**  
Starting from 350\$  
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included.  
Cyprus 3 days 185 \$  
Boat trip to Cyprus & Greece 380 \$  
01.900598, 901598 - 03.258336, 256254  
www.orientplus.com

**ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ**  
Հ.Յ.Գ. «ԳԱՐԵԳԻՆ ՆՕՐԵՆՆ» ԱԿՈՒՄԲԻ ԶԱՆՁԱՆՈՒՄԲ ԴԱՇՏԱԳԱՅՈՒԹԻՒՆ  
18 ՕԳՈՍՏՈՍ 2002

**ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ**  
«ՍԱՐԴԱՐԱՊՈՍ» ԱԿՈՒՄԲԻ ԶԱՆՁԱՆՈՒՄԲ ԴԱՇՏԱԳԱՅՈՒԹԻՒՆ  
25 ՕԳՈՍՏՈՍ 2002

**Հ.Բ.Ը.Ս. - Հ.Ե.Ը.**  
«ԱՆԳՐԱՆԻԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳՍՏ ԸԼԼԱՆՈՎ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ

**ԿՈՒՉՈՒԻ**  
● Physicsh եւ biologyի համալսարանաւարտ դասատուներ, միջնակարգ եւ բարձրագոյն կարգերու համար, նուազագոյնը երեք տարուան փորձաշրջանով:  
Դիմել՝ ֆաքս. 04-711564, կցելով համապատասխան CV-ն:



# ԼԻԶԲՈՆ 1983

# ԳԵՐԱԳՈՅՆ ԶՈՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ 19ԱՍԵԱԿ

## ՊԱՏԳԱՄ ՆԱՀԱՏԱԿԱՅ

### ԼԻԶԲՈՆԸ՝ ՄԵԱՅՈՒՆ ԵՐԲՐՆՆԱՐԱՆ



● **ՍԵԴԻՐԱԿ ԱՃԵՍԵԱՆ.** - Որքան ճնշում ընեն մեր վրայ, մենք նոր էն պիտի ուզենք այդ հողերը, քանի մեր հողերն են ատոմը: Մենք այդ ոչ գնած ենք, ոչ գնումով մեզմեջ ետ առնում: Մենք այդ հողերը... մեր արհեստները կայ մէջը, մեր նախաձայրերուն արհեստները աւելի ճիշդը: Մենք այսօր օտարութեան մէջ կ'ապրինք, առ յոյսը ունինք որ մենք հարկերն ունինք, որ մեր պիտի երթանք, բայց այդ օրը ինքն իրեն չի գար: մենք մեր ձեռքերով պիտի փորձենք բերել, մենք պիտի փորձենք ամէն ինչը, պիտի փորձենք կարելին, եւ պիտի փորձենք անկարելին կարելի ընել:

Մենք գիտենք, որ մահ կամ ազատութիւն է, բայց այս պարագային մահ է, ազատութիւն չկայ: Ազատութիւն կ'ըլլայ, երբ մեր ուզածները տան, եթէ չտրուին, մենք չկանք: Մենք ատոմը բոլորը աչքերնիս առած ենք, եւ մեր ձեռքը սիրտերնիս վրայ, եւ Աստու-

մը չէ, մինչեւ այն ատեն որ մենք հեռու ենք... Միշտ ֆետայիներ կան, յեղափոխականներ կան հայրենիքի մէջ, եւ որեւէ մէկ ատեն մենք չենք մոռնար մեր Դատը, չենք մոռնար, եւ ինչ միջոցներու ալ դիմէ թուրք պետութիւնը, մեզի համար երբեք բան չի փոխեր: Մեր նպատակը շատ յստակ է, մեր գաղափարն ալ յստակ է, մեր համոզումն ալ յստակ է, որ այսօր մենք ընկերներով հոս եկած ենք ամենայն համոզումով եւ շատ հանգստութեամբ, այս գործը կ'ընենք, եւ ամբողջ աշխարհը թող իմանայ, որ հայը կայ եւ միշտ կը մնայ:



Լիզպոնի քրեական դէպքագետունը կրակներու մէջ

**Arméniens : l'opération suicide des terroristes de Lisbonne**  
L'attentat à l'ambassade de Turquie à Lisbonne

**le quotidien de paris**

**COMANDO-SUICIDE ARMENIEN A LISBONNE**

**Herald Tribune**  
Five Armenians Die in Suicide Raid in Lisbon

27 Յունիս 1983ին միջազգային ընտանիքը պահանջներ եղաւ ցնցիչ արարքի մը: Այդ օր լրատու գործակալութիւններու եւ քաղաքական շրջանակներու հետաքրքրութեան եւ միաժամանակ մտահոգութեան առանցքը դարձաւ Փորթուգալի մայրաքաղաք Լիզպոնի մէջ պատահած անհայտնաբաց դէպքը մը, որ միջազգային հանրութիւնը կը դնէր նոր իրակացութեան մը առջեւ:

Այդ օր գիտակից գոհաբերութեամբ մը կ'արտայայտուէր ժողովուրդի մը ցասումը հանդէպ անարդարութեան եւ անիրաւութեան: Այդ օր կը վերահաստատուէր արդարութեան իրաժեքութիւնը հինգ գարուն կեանքերու գերագոյն գոհաբերութեան օրինակով: Հինգ հայ երիտասարդներ Վաչէ Տաղիւեան, Արա Գրեքըրեան, Միմոն Եահնիեան, Սեդրակ Անեմեան եւ Սարգիս Արարհամեան մարդկութեան կը փոխանցէին անխորտակելի ճշմարտութեան մը թելադրանքը եւ կ'ըսէին, որ արդարութիւն ու իրաւունքը վեր են ֆիզիքական ինքնամպաստակ գոյութեան, եւ հայ ժողովուրդը կ'արժեւորուէր իր մարտունակութեամբ եւ պայքարի վճռակնութեամբ:

Լիզպոնի տղոց գերագոյն գոհաբերութեան արարքը կը դառնար պակաս ուժեղանալ պահանջատիրութեան շուրջ տասնամեայ հանգրուանին: Հայ Դատը հայաստանութեան իր մասնակի առաջարկներով, կը բռնէր միջազգայնացման ուղին: Կը քննադատէր Հայ Դատի շուրջ հիւսուած լուրջութեան պատը: Հայ ժողովուրդը վերստին կը դառնար պայքարող ժողովուրդ: Այսօր միջազգային հանրային կարծիքը թեթեւ մտոցած է Լիզպոնի արարքը, բայց հիմնական երկու ուժեր չեն մտոցած եւ երբեք չեն կրնար մոռնալ Լիզպոնը, այնքան ատեն որ չէ լուծուած Հայ Դատը, եւ հայ ժողովուրդը չէ տիրացած իր բոլոր իրաւունքներուն:

Առաջինը հայ ժողովուրդը չի կրնար մոռնալ Լիզպոնը եւ Լիզպոնի տղաքը, որովհետեւ անցը հայ ժողովուրդը դրին նոր անկրկնադարձի մը առջեւ: Լիզպոնի տղաքը ոչ միայն վերահաստատեցին ազգային արժանապատուութիւնը հայ ժողովուրդին, այլեւ անոր առջեւ բացին ճամբար մը, որ սկիզբ կ'առնէ յարատեւ կռիւի թելադրանքէն եւ կ'անցնի բիրտ ուժը յատկանշող քաղաքական իրապաշտութեան:

Լիզպոնեան հայրենիքը մանաւանդ պիտի չմոռնայ Լիզպոնի համեստ, պարզ ու անճուրակ տղաքը, որոնք ծնունդ առին իրմէ, տեսան իր մէջ գարգացող յոռի երեւոյթները, մերժեցին այլ սեսերու մը եւ քաղաքացիներ, ընդվզեցան կրակոտակութեան եւ թուլամորթութեան դէմ եւ ընտրեցին գիտակից մահը, որպէսզի ապի շայ Դատի պայքարը եւ յարատեւ պահանջատիրութիւնը:

Երկրորդը թուրքը երբեք պիտի չմոռնայ Լիզպոնը, որովհետեւ այդ արարքով ան դէմ յանդիման գառութեան ժողովուրդի մը, որուն գաղափարապաշտ գաւազները չեն վախճար սպանալիքներէն, չեն ընկրկիր սաղարաններու առջեւ եւ, մահ մահուող, գիտեն մեռնիլ իրենց իրաւունքներուն համար:

Թուրքը պիտի չմոռնայ Լիզպոնը, որովհետեւ հայ երիտասարդութեան մարտունակ այս արարքը յաջողեցաւ գայն դնել ամբաստանեալի աթոռին վրայ:

Միջազգային հանրային կարծիքը թեթեւ մտոցաւ Լիզպոնը, բայց Հայ Դատը դարձաւ միջազգային օրակարգի նիւթ: Լիզպոնը կրնաւ մոռնալ, բայց այսօր ո'վ կրնայ անտեսել Հայ Դատի գարգացումը իր բազմաթիւ երեսներով, Հայկական Յեղափոխութեան միջազգային ճանաչման պահանջատիրութեան մինչեւ հայկական զոյգ հանրապետութիւններու ամբողջման քայլերը:

Լիզպոնի տղաքը եղան վկաները հայ ժողովուրդին հաւաքական կամքը կրծող յոռի երեւոյթները մերժելու եւ սրբագրելու որոշումին: Լիզպոնի Հինգը իրենց գերբնական լարումով հանդիսացան հարագատ զրբեւտութեան քաղաքական որոշումի եւ ամենայնազնուօր արգասիքը մարտունակ կամքի:

### Միջազգային մամուլին անդրադարձը Լիզպոնի գործողութեան

Յուր փոքրած բան մըն է: Հայկական Յեղափոխական Բանակը ոճ-րագործ մը չէ, ան իր արդար պահանջները կ'ուզէ, որ բոլոր աշխարհ իմանայ, որ մենք արդարացուցիչ հարցեր ունինք, մեր հողերը ունինք, մենք կ'ուզենք ատոմը: Այս ճամբուն վրայ մենք չենք, որ առաջինները պիտի ըլլանք, մենքմէ առաջ շատեր եղած են, եւ կը յուսամ որ մենքմէ աւելի լաւերն ալ պիտի գան, մենքմէ աւելի չըրած գործերն ալ պիտի ընեն...

Մենք երբեք ոչ ծուկնի եկած ենք, ոչ ալ մեր գլուխները վար եղած են. մենք մեռած ենք, մեր գլուխները վեր: մենք այսպիսով պիտի մեռնինք, մենք այս գործին համար կը հաւատանք եւ այս մէկը պիտի ըլլայ եւ շատ յաջող պիտի ըլլայ:

Մեզմէ վերջ եկողները մեր սիրոյն թող չի գան, այլ ազգին սիրոյն թող գան, մենք բան մը չենք, ազգէն մի քանի հոգիներ ենք, բայց հոն ազգ կայ, որ սէր կ'ուզէ, գոհողութիւն կ'ուզէ:

Ես եւ ընկերներս, մենք մէկ հատիկներ չենք, որ հոս եկած ենք, ըսենք, որ «մենք» եւ այլն... մենք մեզի չենք գովեր. մենքմէ շատ աւելի լաւերն ալ կան, կրնայ ըլլալ մենք որոշ տկարութիւններ ունինք, բայց յուսամ, որ մենքմէ աւելի լաւերը կ'ըլլեն եւ եթէ նորէն մենք սխալներ ունինք, մեր սխալները ապագային իրենց գործերուն մէջ թող ճշգրտուին:

Ես շատ հպարտ եմ որ կ'երթամ, քանի կ'երթամ Սուրբ Գաղափարին, որ մենք կը հաւատանք: Քանի եւ օտարութեան մէջ կ'ապրենք, այսինքն ալ բան մը չկայ: Նորէն ես կը մեռնիմ, Մայր հողը չի տեսայ, հոգ չէ, ուրիշները կը տեսան:

● **ՎԱՉԷ ՏԱԼԵԱՆ.** - Մեր ձայնը չի խեղուիր, մինչեւ այն ատեն, որ արդար մեր իրաւունքներն են, մինչեւ այն ատեն, որ մեր արդար պահանջներն են, մեր հողերն են, ինչպէս ամէն աշխարհի չորս կողմ, ամէն մարդ կը հայրենիքը ունի, մեր ալ իրաւունքն է հայրենիքը ունենալ: Մենք սաի ծուռած ենք եւ կը պահանջենք ամէն գնով:

Մենք մինչեւ այն ատեն որ մեր հայրենիքին մէջ չենք, մինչեւ այն ատեն որ մեր հողերուն վրայ չենք, մենք բան մը չենք: Ինչ ալ ըսենք, ինչ ալ ըսենք, կեանքը վայել է, վայելքը հողերուն վրայ կրնաս վայելել: Հողերէն գործը բան մըն ալ չես կրնար ընել, ոչ ալ կը մնաս հայ: Մէկ բան՝ երիտասարդութիւնը թող այլեւս արթննայ եւ սկսի Հայկական Յեղափոխական Բանակի ճամբով շարունակէ քայլերը, թող այլեւս իր վրայ պարտք մը, որ ունի կատարելիք, իր ճնողներուն հանդէպ, իր հայրենիքին հանդէպ, թող լսէ այդ ձայնը, որ մեզի կը կանչէ հեռուէն, թող աչքը բխի մը Հայաստան դարձնէ այլեւս. թող զգայ այլեւս, անզգամ թող չըլլայ, անտարբեր թող չըլլայ: Վայելքը բան

### ՕՐԱ ԳՐԵՃԵԱՆ. - Եթէ «ոչ» ըսենք, մենք հանգիստ ենք Լիբանանի մէջ, ուրիշ մը ըսէ՛ մենք Ֆրանսայի մէջ հանգիստ ենք, ուրիշ մը ըսէ՛ մենք Ամերիկայի մէջ հանգիստ ենք, կը նշանակէ, որ մենք հայրենիքի պէտք չունինք, կը նշանակէ, որ մենք հանգիստ ենք ո'ւր որ ենք... Ասի կը նշանակէ հաւատքի պակաս մեր հողին հանդէպ: Երբոր մենք հողի հանդէպ պակաս ունինք հաւատքի, պէտք է անիկա զօրացնենք, պէտք է անիկա շտկենք, որ մեր հողերուն տէրը ըլլանք:

Պէտք է նախ մենք հող ունենանք, որ աշխարհին ցոյց տանք, որ մենք ազգ ենք: Մինչեւ որ հողերուն տէր դառնանք, մենք միջոցներ պէտք է որդեգրենք, որ աշխարհը լսէ, որ մենք հայ ենք: Միջոցներէն մէկն ալ ճիշդ այս բանն է, որ թուրք կատապտրութեան նորէն պիտի գիտցնենք, որ մեր հողերը ունի, որուն տէր դարձած է: Այն ալ մենք կը պահանջենք մեր հողերը իրմէ:

Ընկերներ, բարեկամներ, ժողովուրդը սաի ամէն թող գիտնայ, որ երբոր մեր հողերը պիտի ազատագրենք, այդ մէկ բանը գոհողութեան պէտք ունի, արիւնի պէտք ունի: Ազատութեան դաշտը՝ գետինը ծառու է, այս ծառու բանը միայն արիւնն է, որ կը ջրէ եւ այն ատեն է, որ ծառեր կը բուսնին: Երբոր արիւն չի թափենք ազատութեան դաշտը, ջուր չի տանք, արիւն չի տանք այդ դաշտին, չիմ կարծիք, որ այդ դաշտին պտուղ կրնանք քաղել կամ բոյսեր կրնան ելլել: Ես միայն կը հաւատամ, որ առանց արիւնի, առանց մահի ազատութիւն չկայ:

Այսօր մէկը քեզի չի գար եւ քու հողերդ «հրամէ» չըսեր, մինչեւ որ դուն իրեն չցցնես պատրաստակամութիւնը, որ դուն պատրաստ եմ մինչեւ արիւնը եւ կեանքը գոհելու այդ հողին համար, անկէ վերջ է որ դիմագիտը, որ հողերուդ վրայ տիրացած է, կը զգայ որ այս ամիճը պատրաստ են իրենց հողերը առնելու մինչեւ արիւնի գնով մեզ իրենց երիտասարդ վարդ կեանքի գնով: Վայելքով, հագուստ հագուելով տեղ չենք հասնիր. մենք պէտք է պայքարինք, արիւն թափենք, որ տեղ հասնինք, որ մեր հայրենիքին տէր դառնանք: Ես երիտասարդներ կ'ըլլայ, երբ որ կ'ըսես իրենց հայրենիքի մասին, կ'ըսեն, թէ երբ որ ժամանակը գայ մենք պատրաստ ենք: Ժամանակը ոչ թէ կու գայ, ժամանակը մենք է որ պիտի բերենք: Ժամանակը մենք երբ որ չի մտեցընենք, չի գար, կը հեռանայ: Մենք ետեւէն պէտք է հասնինք եւ բռնենք այդ ժամանակը: Երիտասարդութիւնը թող ըսէ, որ ժամանակը գայ նէ մենք պատրաստ ենք: Ժամանակը գայ նէ մէկն ալ տեղէն չի շարժիր, քանի որ սկիզբէն արդէն ինքը պատրաստուած է, չի մտածոր այս մասին: Հայ պիտի չի նախնի կ'ուզենք, որ երբ ժամանակը գայ, ինքը մտածէ այս բանին մասին:

մինչեւ ազատագրենք մեր հայրենիքը: Հայրենիքը չի տրուիր, այլ կռուով կ'առնես, երբոր արիւն թափես, երբոր զոհ կու տաս: Հայու արիւնը, հայու սուրբ արիւնը, հայու ջանքով, հայու աշխատանքով միայն հայրենիքը ետ կու գայ, չե՛րազնեք, այսինքն, չըսենք հայրենիքը ո'ւր է, մենք ուր: Այո՛, հաւատքի պակաս է: Բայց մենք վճռած ենք եւ պիտի քալենք ֆետայիներու ճամբով:

Յեղափոխութիւնը այս ձեւով սկսած է եւ յեղափոխութիւնը երբոր սկսի, անշուշտ արիւն կը թափի, այսինքն՝ երիտասարդներ կը գոհուին: Ինչպէս մենք այսօր, վաղը մեզմէն զատ ուրիշներ, հարիւրաւոր եւ հազարաւորներ: Եւ թուրքը որչափ որ ջանայ, անշուշտ պիտի ջանայ մեր վրան ճնշել եւ մեզի արգիլել այս կամ այն արարքները, մենք աւելին եւ աւելին պիտի պոռթկանք... այսինքն՝ պիտի պայքարենք...

Եթէ յեղափոխութիւնը յաջողի, մենք անշուշտ կը տեսնենք մեր հայրենիքը: Կրնայ ըլլալ եւ չի տեսնեմ եւ ընկերներս տեսնեն: Ապագայ սերունդը տեսնէ: Յաւելի է, բայց ինչ ընենք: Մենք ունեցանք հայրենիք, աւելին անկախութիւն, բայց երկու տարուան՝ դժբախտաբար: Բայց այս անգամ մեզի դադար չկայ, եւ մէկ բան յստակ թող ըլլայ, օտարը մեզ ֆայտա չունի:

Կոչ կ'ուղղեմ, անշուշտ բոլոր մայրերուն, մանաւանդ իմ մօրս, որ թող հպարտ զգայ ինքզինքը, որ ինձի պէս հայրենասէր տղայ մեծցուցած է:

Կոչ կ'ուղղեմ միւս բոլոր մայրերուն, որ ստիպեն իրենց գաւազները, որ առնեն մեր քայլը, որն է Արդարութեան քայլը, Հայ Դատին քայլը:

### ՕՍԻՄՈՆ ԵԱԶՆԻԵԱՆ. - Այս գործը հաւատքով կ'ընենք. ոչ թէ միայն հաւատքով, այլ՝ հոգեկան հանգստութեամբ եւ քաջութեամբ: Մէկը մեզի չէ ստիպած, որ ընենք: Ասիկա մեր առաջին գործողութիւնը պիտի ըլլայ:

Յստակ է մեզի համար. կրնայ ըլլալ, որ մենք մեր նպատակին չհասնինք: Կրնանք բոլորս մեռնիլ: Բայց մեզի համար յստակ է, որ արշալույսը շատ մօտ է եւ այդ ձեւով պէտք է դիտենք ապագան:

Այս գործողութեամբ հարիւր առ հարիւր գիտենք ինչ է կամ ինչ պիտի ըլլայ արդիւնքը: Ասկէ անդին մենք միշտ հայ ենք եւ իրենք ալ թող գիտնան, որ հայերը շատ քաջ կ'ըլլան: Մեր նպատակին պիտի հասնինք: Ես հպարտ եմ, որ հայ ծնած եմ, որովհետեւ հայ պիտի մեռնիմ: Եստ ուրախ եմ այս գործողութեամբ...: Հիմա մեր ապրած կեանքը իսկապէս որ կեանքէ զատ ամէն ինչ չի կը նմանի: Կ'ապրինք ուրիշին տիրապետութեան տակ. ուրիշին խամաճիկներն ենք...

Երիտասարդութեան կ'ուզեմ ըսել, թէ նախ շատ անտարբեր են: Երկրորդ՝ իրենց նուազագոյն աջակցութիւնը կամ քաջալերանքը չեն բերեր: (...) Մենք ալ իսկապէս երիտասարդներ ենք: Մենք ալ կը զգայանք մէկն ինչ որ իրենք կ'ընեն եւ մենք ալ կը տեսնենք աշխարհի բարեկեցութեան, բայց կ'ուզենք, որ մենքմէ ետք եկողները վայելեն այս բարեկեցութեան, որովհետեւ այս ձեւով պիտի չկրնանք հասնիլ բաղձալի ապագային եւ պիտի ձուլուինք ուրիշներու մէջ: Իսկ գիտակից մեր երիտասարդութեան մասին կ'ուզեմ ըսել, թէ շատեր կը մտածեն, կ'ըսեն, թէ ամէն ինչ կ'ընեն եւ հիմնական գաղափարներէն երբեք չեն շեղիր: Բայց ես ամբողջովին հակառակ եմ ասոր, որովհետեւ գործով չէ որ կը փաստեն: Միայն խօսքով է, որ ստիպալ կ'ըսեն: Երբ գործի կարգը գայ, բան չեն ընեն: Ես պիտի ըսէի, թէ իրենց լուսագոյնը ընեն, որովհետեւ գործ չի պակասիր: Պարտիկ եւ մեծ գործեր չկան, այլ լաւ եւ գէշ գործեր: Ես կը հաւատամ, որ մերը լաւ գործ է:

### ՕՍԱՐԳԻՍ ԱՐԱՎԱՄԵԱՆ. - Այդ ֆետայիները, որ ժամանակին կը կռուէին հայրենիքի համար, մեզի շնորհած են այդ շնորհքը, որ մենք շարունակենք: Ուրեմն, մեր նպատակը այն է, որ մենք պիտի շարունակենք մեր նախնի ֆետայիներու ճամբով:

# Գրական Էջ

## ՅՈՒՇԱՐՁԱՆ ԼԻՉՊՈՆԻ ՀԻՆԳԻՆ



Արցունք ունի՞նք:  
 Ամբողջ ազգով ունի՞նք արցունք  
 Հայ աչքերուն մեր ծովացած  
 Եւ ունի՞նք սուգ՝  
 Չմեռնալից  
 Երկինք հագած մեր հոգիին,  
 Սո՛ւգ եւ արցունք սփիւռքտարած,  
 - Ո՛վ գաւակներ,-  
 Ի յուշ բոսոր ձեր գարունին,  
 Որ դեռ հագի ծագած, ծաղկած՝  
 Մտաւ ձե՛ն,  
 Ի յուշ կանաչ արեւուն ձեր,  
 Որ դեռ չերգած երգը ոսկի,  
 Որ ան՛ր երկնած երկն իր լոյսի՝  
 Մուրը մտաւ անվերադարձ,  
 Հորիզոնին ետեւ մահուան,  
 Երբե՛ք սակայն մութ մոռացման:

Ձեր գրոհին առիծաձեւ  
 Ու հրաթեւ,  
 Մե՛նք, ձեռնուձայն  
 Հանդիսատե՛ս թէ՛ն՝ սակայն  
 Հրաբուխի մե՛ք ունի՞նք կործո՞ք,  
 Մորթիկի պէս ունի՞նք բոու՞նք՝  
 Ատեաններուն դէմ շնական  
 Ու դաւաճան,  
 Ուրացման դէմ Տէր-Չօրներուն,  
 Կշիռքներուն դէմ աշխարհին  
 Այս խաբէրայ  
 Ար դաւերուն դէմ սատանայ:  
 Այո՛, թէ՛ն Սփիւռքի չափ  
 Արցունք ունի՞նք լալու համար  
 Ափէ ի ափ  
 Մեր սուգն հազար,  
 Ցաւն անհամար,  
 Բայց ե՛ւ ունի՞նք փոթորիկի  
 Չափ հայ բոս՛ւնցք,  
 Հրաբուխով եռացող կո՛ւրծք,  
 Մե՛նք ուխտելու համար ձեզի,  
 - Ո՛վ գաւակներ ֆետայեցի,-  
 Որ չպաղի՝  
 Պիտի հրաբուխը մեր Դատին  
 Յարաբորբոք,  
 Չխաղաղի՝  
 Պիտի ոգին Արարատին  
 Մշտամորմոք,  
 Որ չհանգչի՝  
 Պիտի կոուփը մեր Պահանջին  
 Իրաւական  
 (Որ ոռոմքի պէս կը թափէ դո՛ւտ)  
 Ո՛չ ալ լու՛ է պիտի մեր հին,  
 Բայց չհինգող Իրաւունքին  
 Աղաղակը պողպատակոտ,  
 Բողոքը գոռ...  
 Ո՛վ եղբայրներ հայդուկագուն,  
 Որ տեսիլքի ու խոյանքի  
 Ձեր վէտ ճամբուն,  
 Բայց կէտ ճամբուն,  
 Ինկա՛ք ինչպէս սէգ դրօշակ,  
 Ինկա՛ք՝  
 Ձեր հուսկ երգը չերգած,  
 Ինկա՛ք՝ լսան երկը չերկնած,  
 Ձեր երազ հողը չհերկած,  
 Դեռ չտեսած ուշամնաց  
 Արշալոյսը ձեր յաղթութեան  
 - Ինկա՛ք սակայն շանթի ման,  
 Խղճին վրայ  
 Աշխարհի փոտ արդարութեան,  
 Ինկա՛ք սակայն  
 Պայքարի մը համար աճող՝  
 Թէպէտեւ փո՛ւշ,  
 Արդար՝ բայց թունդ այն պայքարին,  
 Որ կը տանի  
 Մարաշէն Մոշ Սիւնչեւ Մասիս  
 Եւ կը հասնի,  
 Կը հասցնէ Ազատութեան  
 Լաւայի գոյն, մրուրի համ  
 Արցունքի հետ եղբայրական,  
 Մորթիկի շունչ  
 Բոունքի հետ պահանջատէր,  
 Մեր սրտերուն, մեր ձեռքերուն  
 Ունի՞նք նաեւ ծաղիկ ու խունկ  
 Ու ծափողջոյն՝  
 Ձեր անուրի՛ն ֆետայաբոյր,  
 Ձեր անհուն՛ն աշխարհասփիւռ,  
 Ո՛վ մարտիկներ  
 Երազներուն եւ յոյսերուն  
 Հայաստանի,  
 Ամբողջակա՛ն Հայաստանի:  
 - Հազար բերնով համբո՛յր ձեզի,  
 Տղա՛ք Հայկի՛...  
 ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

## ՕՐՀՆԵՐԳ ՄԵՐՕՐԵԱՅ ԱՍՊԵՏՆԵՐՈՒՆ

Տղոց համար, որ ծնան օտարութեան ավերուն  
 Եւ կարօտի մխացող կատարներէն հեռագոյն  
 պոռթկում ու բոց շանթեցին,  
 թող որ ամպերը գրեն  
 տրոփներով Եփրատի եւ լոյսերով Անիի  
 երգն այս դժուար, բայց խելաւ՛  
 իբրեւ սիրոյ Կիրակի...  
 Տղոց համար, որ ծնան հին վէրքերէ՛ ձեռնաբերող,  
 տղոց համար, որ եկան նոր կանչերէ՛ բարձրացող,  
 Քարաստան երկրին երկունքէն կարմիր,  
 Արտաւազը այրին ցատու՛ն հրթիռ  
 Եւ կեանք ու ուխտ ցանեցին սահմաններուն այս անգոյն,  
 թող որ շանթերը գրեն  
 օրհներգներով Սասունի եւ կանչերով Կարինի  
 երգն այս խելաւ, բայց անմար՛  
 իբրեւ պատգամ գալիքի...  
 Տղոց համար, որ եկան  
 Եւ պիտի գան գունդ առ գունդ,  
 արդ կը գրեն բառ առ բառ,  
 կ'աշտանակուիմ տող առ տող  
 քերթուածն անոնց,  
 որ քերթուածներ երկնեցին այբուբենով արիւնին՝  
 Լիպունի թոյն երկինքի կնճիռներուն մէջ մթին.  
 քերթուածն անոնց,  
 որ քերթուածներ ձուլեցին սուրբ տառերով հրածին՝  
 Պելկրատի կոյր ատենանի տոմարներուն դաւածին.  
 քերթուածն անոնց,  
 որ քերթուածներ գոռացին ականներով ասանդին՝  
 Իսրայէլի մահահոտ փողոցներուն մէջ դեղին.  
 քերթուածն անոնց,  
 որ քերթուածներ ծաղկեցան պայթումներով արփիին՝  
 Անճելըսի փերեպակ ատենաններու եւ թերթերու էջերուն.  
 քերթուածն անոնց,  
 որ քերթուածներ դեռ կ'երկնեն երդումներով Արցախի՝  
 Սոււձայիթի մահագոյն գոհիներէն եւ տիղմերէն այ անդին,  
 ցայտաղբիւրէն դուրս խոյացող երգին նման՝  
 իբրեւ կեանքի եւ գոյութեան վերջին սահման  
 Եւ վերջնագոյն կարմիր պատգամ:

(Ինչպէ՛ս գրեն եւ օրհներգն այս սրբագոյն,  
 երբ ձայնն իրենց մշտաբերուն, օ՛, քերթուածն է գերագոյն...):  
 •  
 Ու քսան տարի ան ծամեց կրակ,  
 ու քսան տարի՝ հարցում ու փակակնք,  
 ու քսան տարի՝ անցում, տառապանք,  
 Ու քսան տարի՝ թափառում, վրկանք՝  
 երկիրէ երկիր, երկիրէ երկիր,  
 օ՛, վիշտեր անգիր...  
 Ու քսան տարի ան ծամեց կրակ,  
 լքուած ու ծախուած հերոս մը ինչպէս,  
 ու պարպեց այսպէս՝ իր սիրտը կարմիր,  
 կեանքի հրաւէր որօշ մը ինչպէս,  
 բայց ո՛չ մէկ երկիր անունն իր առաւ,  
 բայց ո՛չ մէկ երկիր «ա՛խ, կոռունկ» ըսաւ,  
 «Արտաւազը» չըսաւ, խոստացաւ - մոռցաւ,  
 «մոռցաւ» - ուրացաւ, կամ քիչ մը... լացաւ:

•  
 Ու մնաց մինակ՝  
 իր ստուերին հետ,  
 ու մնաց մինակ՝  
 իր բազուկին հետ,  
 ու եղաւ մինակ՝  
 իր հրդեհին հետ  
 ե՛ւ ցատում,  
 ե՛ւ նետ...  
 Երկիրն իր կանչեց  
 Եւ նենգ խաղերու միշտ հանդիպեցաւ,  
 անունն իր պարպեց  
 Եւ գորշ շարժերու ան միշտ բախեցաւ,  
 բարձրացաւ - ինկաւ,  
 ինկաւ - բարձրացաւ  
 Եւ վերածնաւ դարաւոր արեան  
 հրդեհ ասանդէն, կարօտէն, կանչէն,  
 տրոփէն հողին, ճիւղերէն շողին  
 Եւ պայքար դարձաւ,  
 Եւ պայքար՝ դարձաւ,  
 Եւ պայքար՝ դարձաւ:

•  
 Եւ պայքար դարձած՝  
 կարմիր ասանդին վարձերը նորին  
 կուրծքն իրենց բացին դաշտին, սուրին  
 ընդդէմ ծածանող, պայթող, ծաւալող սրբապան պոռթկում  
 Եւ լուռ պագին դղրդիւնն ահեղ՝ պատմութեա՛ն ձայնին:  
 Ողջո՛յն պայթումին,  
 ինքնագիր երգին նահատակներու,  
 որ կ'առաջանայ մահուան եւ կեանքի խաւարին միջեւ,  
 ողջո՛յն պայթումին,  
 հրեղէն խաղին նահատակներու,  
 որ կը խորտակէ դուռները բոյր կողմ ատենաներու,  
 ծիւրէ կ'արձակէ, յաղթերգ կը կանչէ եւ երկինքներէ հեռու հեռաւոր  
 կ'որոտայ անդարձ վճիռը ցեղին, քերթուածն արիւնին:

- Չայնե՛ր կը լսուին:  
 - Երդումներ՝ ըսէ:  
 Մենք մարտիկներն ենք՝ կ'ըսեն,  
 մենք փամփուռներն ենք՝ կ'ըսեն,  
 մենք յուշն ենք, վիշտն ենք, պահանջն ենք, բոցն ենք,  
 ծիրանի ծառն ենք եւ մեր դաշտերուն անկէպ բողոքն ենք՝  
 կ'ըսեն - կը կրկնեն,  
 կը կրկնեն - կ'ըսեն,  
 կը կրկնենք - կ'ըսենք,  
 Եւ կեանք կ'արարենք:

Հայաստանն ենք մենք -  
 անթաղ շանթն ենք մենք,  
 մենք արեգակն ենք, բայց նաեւ մահն ենք,

մամիկին «օ՛ֆ»ն ենք, վարդ աղջիկներուն ոսկի ծիծաղն ենք,  
 մանուկին երգն ենք, անվրէպ խփող հայդուկին խօսքն ենք  
 Եւ մեր դաշտերուն արդար բողոքն ենք, մենք պատարագն ենք՝  
 կ'ըսեն ու կ'երգեն, կ'երգեն ու կ'ըսեն  
 Եւ դարձեալ ընտիր խումբեր կը կապեն:

•  
 Արցախը կանչն է Մասիսին  
 Եւ սլացքը հայկեան նետին,  
 իսկ Չէյթունը՝ թեւերն Արաքսին՝  
 Սփիւռք վերջին արնածոր երակներէն սաւառնող:

Հայաստանը դարպասն է երկինքին,  
 Հայաստանը երկինքն է երկինքին,  
 իսկ Սասունը՝ սանդուխտ Լիպունիին՝  
 Սփիւռք վերջին մշտաբեր տրոփներէն բարձրացող:

Սփիւռք վերջին մէջ անշէջ,  
 բացէ՛ք սիրտը մեր բազմախոց  
 Եւ մեր ազգը հապար ազգեր կը գտնէք:

•  
 Սփիւռք վերջին մէջ անշէջ,  
 բացէ՛ք սի՛րտը մեր բիրախոց  
 Եւ մեր ազգը կապմ ու պատրաստ կը գտնէք:

•  
 Արցախը ուխտն է Մասիսին  
 Եւ հրաբուխն արմենական բոցարինին,  
 իսկ Սասունը՝ թոհիքն Արաքսին՝  
 հայոց հողի բազմաշարչար ընդերքներէն խոյացող:

Արտաւազը չեմն է Հայաստանին,  
 Հայաստանը երկինքն է երկինքին,  
 Հայաստանը դարախոսն է երկինքին,  
 իսկ Փետրուարը՝ հաւատարմութեան բոցաւառնը հայ հողին՝  
 մեր պատմութեան բիրամեայ դժոխքներէն բարձրացող:

•  
 Հայոց հողին մէջ բիրախոց,  
 բացէ՛ք սի՛րտը մեր մարտահոծ  
 Եւ փամփուռներն մեր անշէջ ամէնուրեք կը հնձէք,  
 զի սիրանքն ենք մենք յաւերժին՝ Քարաստանին,  
 կ'ըսեն հապարտ, կ'ըսեն հաստատ եւ մեզ կ'ըսեն  
 բոցով, արեանք սրբագրուած Պայքար ու Դատ:

Կը ջնջեն յանկարծ միջոցներն ամէն,  
 կը ջնջեն ամէն պատուար ու սահման,  
 կ'ըլլան երգ, բանակ, վահանակ ու խոտի,  
 Եւ կ'արձակեն բոյր քայլերն դժոխքի

դէպի ափունքը կեանքի...  
 Արտաւազն եկա՛ւ,  
 եկա՛ւ վերջապէս, եկաւ յաղթածի  
 պատմութիւն կերտած հայդուկներուն հետ  
 Հայոց աշխարհի եւ խալտաք ու ծաղիկ հողը հայրենի:  
 Նայեցաւ չորսդին եւ փողոցներուն լոկ ինքզինք տեսաւ -  
 միլիոն բազուկներ՝ հրեղէն ցատում,  
 միլիոն բազուկներ՝ հրեղէն պոռթկում,  
 միլիոն բազուկներ՝ եռացոյն երդում  
 Եւ Ապատութեան հրապարակի յիշքներն ամէն՝  
 վերամկրտման եւ մարտնչումի օվկիա՛ն հրեղէն:

•  
 Արիւնը վերադարձ է պատմութեան խորհորդներուն,  
 յայտնագործումը՝ արմատներու պատգամներուն,  
 ապա՝ հայդուկի անաւարտ այրում:

•  
 Արիւնը թոհիք է նաւասարդեան,  
 բայց անպայման դարձ՝ հսկող սօսիներուն՝  
 դայար քրմապետներու իմաստուն արմատներուն  
 հերոսներուն թանկ արիւնը անձրեւելու...  
 (Ընծայաբերումը արեան օրհնեա՛լ Եղիցի, օրհնեա՛լ եղիցի...):

Բոցը կու գայ դուրս տեսիլին մայր ակունքէն,  
 ողջո՛յն բոցին ամենապօր.  
 տեսիլներն իմ հորիպոսին կեանք են արդէն,  
 ողջո՛յն տեսիլն ամենապօր.  
 ամպն է իշխան, քարը՝ կրակ, իսկ գիշերը՝  
 կեանքի հնոց, ոռոմը ու ամրոց:

- Չայնե՛ր կը լսուին:  
 - Դուն ուխտե՛ր, ուխտե՛ր եւ ուխտե՛ր՝ ըսէ:  
 Հայոց հողին չափ տաք, հաւատարմ,  
 ներկայութի՛ն ենք մենք սերունդներուն  
 Եւ ներկայութիւնն այս պատգամն է բոյր՝ ծամանակներուն:

•  
 Հայաստանն ենք մենք -  
 կանաչ պատարագ մենք Գանձասարն ենք,  
 Ազոտաբարէն նպատակաշէշտ ծայրօրոյ յաւան ենք,  
 բայց եւ Նարեկայ վանքին սրբամաշ քարին ծնրադրող,  
 հայրող, երկնացող բիր սերունդներուն տաղուած հաւատքն ենք,  
 մենք քարէ ցատում Սասուն - Մուսս տաղ ոգին ենք հայկեան,  
 բայց եւ հեպտոթեամբ, բարութեամբ լեցուած հասկերն ենք բուրեան,  
 մենք արեգակն ենք, սիրոյ տաղերն ենք, կրակն ենք, մահն ենք,  
 մենք յուշն ենք, կանչն ենք, պահանջն ենք, ուխտն ենք,  
 մենք արդարութեան անվրէպ խփող սուրբ փամփուռներն ենք,  
 բայց եւ մարդկութեան մենք մաքուր խիղճն ենք  
 Եւ ձե՛ր իսկ ձայնին կորսուած շէշտն ենք:

Արտաւազն ենք մենք ցեղին Թորգոմեան՝  
 թող բո՛ցը խումբէ.  
 մարմինս է վահան դաւերուն համայն՝  
 թող մո՛լթը խումբէ.  
 հոգիս թոհիքն է ուխտին Արամեան՝  
 թող մա՛հը խումբէ,  
 թող խումբէ՛, խումբէ՛,  
 զի Արարատն ենք մենք Արդարութեան,  
 լարուած ականք՝ Սիրազորութեան,  
 Եւ անշէջ երթը՝ Յեղափոխութեան:

«Նորք», 1998, թիւ 1, հատուածներ



# Մանկապատանեկան

## ՆՇԱՆԱԻՈՐ ՆԱԻԱՍՏԻՆԵՐ

Ահալասիկ նշանաւոր կարգ մը նաւաստիներ, որոնք շրջած են աշխարհի ծովերուն վրայ, գամազան դարերու ընթացքին:

### ՖԵՌԻՆՆ ՏԸ ՄԱԺԵԼԼԱՆ

Ֆեռնան տը Մաթելլան փորթուգալցի էր: 1519ին ան իր հինգ նաւերով ճամբայ կ'ելլէ Եւրոպայէն: Նպատակը Յոնց տալ, որ կարելի է Ասիա հասնիլ՝ անցնելով Քոլումպոսի նոր գտած Ամերիկայի հարաւէն:

Տարուան մը նաւարկութենէ ետք, Մաթելլան վերջապէս կը գտնէ անցք մը Ամերիկայի հարաւը եւ կը հասնի անձանօթ ովկիանոս մը: Անոր ջուրերը այնքան հանդարտ կը թուին, որ Մաթելլան զայն կ'անուանէ ինդոզական ովկիանոս: Ան կը կտրէ ինդոզական ովկիանոսը, սակայն կը մահանայ Ասիոյ մօտիկ ջուրերուն մէջ: Անոր նաւերէն միայն մէկը կը վերադառնայ Եւրոպայ:



ՓԻԹԵՐ ՊԼԵՅՔ

Փիթեր Պլեյք նոր զեւանտացի էր: Իր առագաստանաւով ան անգամ մը տիրացած է աշխարհի ախոյեանութեան եւ երկու անգամ ալ՝ Ամերիկայի բաժակին:

Սակայն ան սպաննուեցաւ արգիլուած որսեր կատարող անձերու կողմէ, 2001 թուականին, երբ կը հետախուզէր Ամազոն գետը:

## ԾՈՎԱՆՈՒՇՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ



Ծովանուշները երեւակայական եակներ են, որոնք ունին կոնց մը մարմինը եւ ձուկի մը պոչը: Կարգ մը ծովանուշներ շատ ծանօթ են:

### ՈՂԻՍԵՆՍ ԵՒ ԾՈՎԱՆՈՒՇՆԵՐ

Ողիսես «Ողիսական» հերոսն է: «Ողիսական»ը յունական նշանաւոր աւանդակէ մըն է, գրուած՝ Հոմերոսի կողմէ:

Ողիսես կ'ուզէ լսել ծովանուշները, որոնք իրենց հմայիչ եւ կախարդական երգերով մարդիկը կը քաշեն ծովուն խորերը: Հետեւաբար ան իր նաւաստիներէն կը պահանջէ, որ անոնք իրենց ականջները գոցեն, իսկ զինք ալ կապեն նաւուն կայմին: Այս ձեւով

Ողիսես կը լսէ ծովանուշներուն նշանաւոր երգերը, սակայն կը փրկուի անոնց մահացու թակարդէն:

### ՍՆՏԵՐՍԵՆԻ ՓՈՔՐԻԿ ԾՈՎԱՆՈՒՇ

Անտրոսնի այս պատմութեան մէջ ծովանուշ մը կը փրկէ ծովուն մէջ

խեղդող իշխան մը: Դժբախտաբար ան կը սիրահարի այս երիտասարդին, եւ իր միակ փափաքը կ'ըլլայ անոր մօտ երթալ: Ան վճուկէ մը կը պահանջէ ձուկի իր պոչը փոխանակել երկու ոտքերով: Վճուկը կ'ընդունի, պայմանաւ որ ծովանուշը կորսնցնէ խօսելու իր կարողութիւնը:

Որովհետեւ համր է, խեղճ ծովանուշը չի կրնար արտայայտել իր սէրը իշխանին, որ ուրիշ կնոջ մը հետ կ'ամուսնանայ: Յուսահատ՝ ծովանուշ կ'ուզէ սպաննել իր սիրած անձը եւ անոր հետ մեռնիլ: Սակայն ան կը հրաժարի այդ գաղափարէն, դարձեալ ծովուն մէջ կը սուզուի եւ կ'անհետանայ...

### ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

